ՕՐՀՆԵՐԳ՝ ԷՋՄԻԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ

ԿԱՌՈՒՑՄԱՆ 1680-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Թող հավերժ օրհնյալ լինի երակը
Մեծ լուսավորիչ հայր Գրիգորի,
Ուր ասվում է, թե Քրիստոսը Տեր,
Այսինքն՝ ինքը Միածինը Սուրբ,
Երկնքից իջել և ոսկե մուրճով
Հարվածել է այն մեհյանատեղին,
Ուր և կառուցվեց այս վանքը շքեղ՝
Էջմիածինը մեր սուրբ Հավատքի...

Օրհնություն և փառք
Կառուցողներին նրա մեծագործ
Որոնք ջլապինդ իրենց բազուկի
Քաջարվեստ ուժը չխնայեցին,
Որ այն նմանվի Աստծո տաճարին...

Օրհնություն և փառք
Այս եկեղեցու դիտարանից ներս
Թափանցած լույսի առաջին շողին...
Այս եկեղեցու առաջին մոմը
Վառող ձեռքերին.—
Նրա առաջին խաչակնքվողին,
Ու մկրտվողին...

Օրհնություն և փառք
Նրա առաջին վանքը խփողին,
Բուրվառ վառողին,
Պսակ օրհնողին,
Պատարագողին,
Եվ աղոթողին...

Օրհնություն և փառք
Նրա առաջին խնկավաճառին,
Կաթողիկոսին ու սարկավագին,
Նրա առաջին նվիրյալ վոհին,
Եվ ճգնավորին...

Օրհնություն և փառք
Նրա վորավոր պատերի ներսում
Առաջին անգամ արցունք թափողին...
Առաջին անգամ այդ եկեղեցու
Սերն ու Հավատքը քարոզողին...

Օրհնություն և փառք
Նրա դարպասներն ու խորանները
Առաջին հսկիչ այն պահակողին,
Որ գիշերն արթուն էր,
Ցերեկն՝ վգաստ...

Այսքանից հետո
Հավար օրհնություն և փառք լինի թող
Այս տառապած ու քարքարոտ հողին,
Որն իր թիկունքին
Հպարտությամբ ու սիրով է կրում
Հայոց գրերից էլ ավելի հին
Հավատի կոթողն այս հայակենտրոն...

ԳԵՎՈՐԳ ԽԱՉԱՏՈՒՐ